

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար

Տարեկան ֆր. 5
Վեցամս. " 2

Արտասահման
Տարեկան ֆր. 7
Վեցամս. " 4

ԱՇԽԱՐՀ

Համակ և դրամ
դրկել խմբագրու
թիւան հասցէին :

Rédaction
du journal
"Achekhar"
Varna

Շ Ա. Բ Ա. Թ Ա. Թ Ե Ր Թ

10 ՍԱՆԴԻՄ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

10 ՍԱՆԴԻՄ

ԿԱՐՆԻՈՐ ԱԶԴ

Խմբագրութիւնս պատիւ ունի յայտարարել թէ՛ ԱՇԽԱՐՀ ժամանակաւոր դադար մը պիտի ունենայ, փոխադրուելու համար Ռուսոմուք, ուր պիտի վերստին լոյս տեսնէ, ծանօթ ու ձեռնհաս անձնաւորութեանց ապահովեալ աշխատակցութեամբը, ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅԱՍՏԱՆ անունին ներքեւ, իր կրկին ծաւարովը, շաբաթը երկու անգամ, բաղաբազան ամենաթարմ լուրերու բովանդակութեամբ եւ ՀԻՆԳ Փրանք տարեկան բաժանորդագիրով:

Պուլկարիոյ մէջ ձեռքէ պիտի ծախուի հատը տասը բարա:



Գ Ա Ղ Ա Փ Ա Ր — Ո Ւ Ժ

— 0 —

Ազգերը իբրև բարոյական մեծածաւալ մարմին, յարատեւ գոյութիւն ունենալուն համար, անհրաժեշտ կարիք ունին սնուցիչ—առաջնորդ գաղափարների: Կեանքի պայքարի ընթացքում ազգերի գոյութեան պայմանները նոյն իսկ հիմնական փոփոխութեանց կարող են ենթարկուել, բայց այդ պարագային մէջ ապրելու ցանկութիւն ունեցող ազգը պէտք է ստեղծէ և առաջ բերէ նոր գաղափարներ, նոր ուժ, որոնք իրեն պիտի տան կեանքի աւելի ընդարձակ պատկեր, գոյութեան աւելի լայն ասպարէզ:

Ազգերը միայն այն ժամանակ են անհետացած, երբ իրենց գոյութեան պայմանները փոխուած ժամանակին՝ չեն ստեղծած, առաջ չեն բերած առաջնորդ գաղափարներ, ուրիշ խօսքով, գոյութեան նոր յենակէտ չեն ստեղծած: Հայ ազգը իւր երկարատե կեանքի ընթացքում, իրեն գոյութեան պայմանները մի քանի անգամ փոխելովը, անդադրում մարտ է մղել իւր յարա-

տեւութեան համար: Եւ եթէ, այդքան բազմադիմի իրադարձութիւններից յետոյ, նա դեռ շարունակում է գոյութիւն ունենալ, այդ էլ մըմիայն այն պատճառով որ հայ ազգը իրենուղեգիծ է ունեցած միշտ նոր գաղափարներ և ձգտում դրանց իրագործման:

Այն օրից, երբ այլ եւս զժբազդ հանգամանքներին դիմանալ չկարողանալով, հայը կորցրեց իւր անհատական ազգային անկախ կեանքը և օտարի լծի տակ ինկաւ, նա երբէք չը համակերպեց այդ կրաւորական դրութեանը: Քաղաքական այդ կացութիւնը հայի համար երբէք վերջնական չէ եղած: Այո, փոխուեցան իր գոյութեան պայմանները բայց և յառաջ եկան նորանոր մղիչ գաղափարներ և հայ ժողովուրդը ստեղծեց Հաւրուի թրի աւանդութիւնը, Մհերի գուռը և Սասունցի Դաւիթը:

Ազգային այդ աւանդութիւնները մի տեսակ հայելի են, որ դարերէ ի վեր ճշգրութեամբ արտացոլացրել են հայ ժողովուրդի իղձերը, հետեւաբար, իբրև կտակ ժառանգութիւն թողած՝ յետագայ սերունդներին, Հայ ժողովուրդի ըստեղծած հերոսների պատկերը, որ նրա գաղափար—ուժի մարմնացումն էր, մի օր, յառաջ պիտի բերէր այն սերունդը, որ իւր նախահարց կիջը ձեռք առնելով պիտի ջանար իրագործել կտակին այն կէտերը, որ իւր գոյութեան նորանոր սիւները պիտի լինէին: Եւ արդարև, հայ կեանքը վերջապէս երկար երկունքից յետոյ ըստեղծեց, յառաջ բերեց այդ ցանկալի սերունդը: Սկսեցաւ անհաւասար լի յոյսերով պայքարը . . .

Վերջին տարիների մեր պատմական կեանքը, իւր բոլոր կողմերով ինչքան էլ ախուր լինէր, մի անշեղ դիմ էր հայ ժողովուրդի ինքնաբուզի ցանկութեանց:

Սասունցի Դաւիթները, ազգիս հալազատ զաւակ յեղափոխականներն էին, որոնք իրենց դիւցազնական առաքինութեամբ շատ կարճ ժամանակամիջոցում ո՛չ միայն շարժեցին ամբողջ հայ-

ութիւնը . նոր կեանքի նոր գաղափարներ ներ-
շնչելով նրան , այլ քիչ էր մնացեր տապալման
վերջին հարուածը տային այն եօթնադլխեան հը-
րէշին , որի գլուխը դարերի ընթացքում չկա-
րողացաւ շախշախել ներդաշնակութեան քողով
առաջնորդուած աններդաշնակ Եւրոպան :

Եթէ հայ յեղափոխականին տապարը այս ան-
գամ չը խորտակեց արդէն փտտած ծառը , դեռ
այդ տեղէն չէ կարելի եղբակացնել որ սա նորէն
կարող է վերակենդանանալ : Ընկած հերոսներէն
յետոյ , նորանոր շարքեր կ'առաջանան , տողոր-
ուած նոյն վեհ գաղափարներով , և , մի օր , կ'ի-
րագործեն քաղաքական այն կտակը , որ ժառան-
գութիւն են ստացած իրենց պաշտելի նախա-
հայրերից :

Մ. ՍԱՊԱՀ—ԳԻՒԼԵԱՆ

ՀԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ՄԷՉ



Գ.

Մեր վարժարաններուն համար կողմուելիք ծրա-
գիրը պէտք է ընդգրկէ այն , ինչ որ պէտք է հայ տը-
ղու մը համար , մինչև իր 15 տարեկան հասակին մէջ ,
իր մայրենի լեզուէն ու իր պատմութենէն : Հայ տղայ
մը , պէտք է մինչև իր այդ տարիքը՝ յաջողապէս աշ-
խարհարը կարգալու , հասկնալու , վերլուծելու և գը-
րելու կարողութիւնը ունենայ . պէտք է հասկնայ նաև
գրաբար լեզուն իր կարողութեանը համեմատութեամբ .
իսկ , ինչ որ կը վերաբերի հայոց պատմութեան , անոր
սահմանը պէտք է աւելի լայն ըլլայ , անոր առասպել-
ները սկսելու են , մանկապարտէզի շրջանին մէջն իսկ
հայ տղուն երևակայութիւնը վառել , իսկ , յետոյ , երբ
կը սկսի ա՛լ տարիքն առնել ան , ու համեմատապէս զար-
գանալ , քննադատութեան ոգի մը պէտք է անցնել
պատմութեան դասախօսութեան մէջէն : Աս պիտի ըլ-
լայ ահաւասիկ ազգային իւնուրը :


Առանց մանկապարտէզի բաժանումները հաշուե-
լու , Պուլկարիոյ ամէն մէկ հայաշատ գաւառի վար-
ժարանը պէտք է ունենայ 8 կարգ , որոց 4ը նախա-
պատրաստական և 4ը բուն կրթական : Առանց երկուքն
ալ ձեւուած Պուլկար նախապատրաստական և ժիմնա-
զական 4 իշաններու ծրագիրներուն՝ միայն հայերենի և
հայ պատմութեան առաւելութեամբ : Եւ երբ , հայ
տղայ մը աւարտելով այս կազմակերպութեամբ հայ
վարժարան մը , այն վիճակին մէջ ըլլայ , ուր կարողա-
նայ ժիմնազի մը ու և է երկրորդական մասնագի-
տական վարժարանի մը 4րդ իշանը՝ մտնալ , առանց ո

և է քննութիւն անցնելու , բնական է որ Պուլկար լեզ-
ուի քիչ շատ հմտութիւն պէտք է ունենայ , ինչ որ ան-
հրաժեշտաբար կարելի կըլլայ , երբ նկատի առնենք որ ,
տղան արդէն նախակրթարանի 3րդ դասարանէն պիտի
սկսի սորվիլ այդ լեզուն :

Այս ծրագիրին , զոր հոս կը ներկայացնեմ ընդ-
հանուր գծերով , իրագործմանը համար անհրաժեշտօ-
րէն նիւթական պէտք կայ , ինչ որ , շատ հեշտօրէն
պիտի կրնանք հայթայթել , երբ ամսական 1500 Ֆը-
րանքնոց պիւտձէի մը հարկաւորութիւնը աչքի առջեւ
ուենանք : Միթէ 200 սղունէ բաղկացած գաղթակա-
նութիւն մը չպիտի՞ կրնայ հայթայթել այս պղտիկ գու-
մարը իր զաւկներուն դաստիարակութեանը համար :
Երիտասարդ բարեացակամ անգամներէ կազմուած հս-
գաբարձութիւնները պէտք է վերջնապէս գումարեն ընդ-
հանուր ժողով մը Պուլկարիոյ կեդրոններէն մէկուն մէջ ,
մասնակցութեամբ տեսուչներու եւ տնօրէն դասատուներու ,
ուր խնդիրը ծեծուելէ յետոյ պէտք է վճուել այս
կամ ասոր պէս բարերար ծրագրի մը գործադրութիւ-
նը : Ընդհանուր ուղեգրի մը պիտի ըլլայ ա՛տ պուլկա-
րիոյ բոյր հայ վարժարաններու համար , բան մը , որ
տարիներէ ի վեր ցանկացուած , բայց որուն նշանակու-
թիւնը չէ ըմբռնուած մեր տգէտ հօգաբարձուներէն ,
որոնք սերունդներ կրթելու ճակատագրին հետ կը խա-
ղան :

ԹՈՐԳՈՄ—ՇԱՀՆՈՒՐ

ՎԱՂՈՒԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԸ



Միջավայրն ու կլիման , ցորչափ ազդեն հը-
ղօրապէս քաղաքակրթութեան վրայ , անոր տար-
բեր երեսները զանազան երկիրներու մէջ է որ
պիտի զարգանան : Այսպէս , ինչպէս սառնապատ
երկիրները ծնունդ կուտան կարծր , առուր , խո-
րունկ արտադրութեանց , և ինչպէս անոնց գե-
ղեցկագիտութիւնը պարզ , անարուեստ ու ջինջ
կըլլայ , այն երկիրներուն մէջ ալ , բնական է ,
ուր կլիման մեղկ է և տեսարանները փափուկ ա-
ռաջ պիտի գայ պայծառ գեղարուեստ մը շնոր-
հալի , խորաթափանց գիտական ոգիէ մը աւելի
արուեստ մը՝ բոլորովին ծիրանաների , բոլորովին
նրբանուրբ : Անուրանալի է երկու մտաւորական
տարրերուն այլազան բարիքները : Գիտութիւնը ,
որ Անժանօթը պիտի պարզէ , ներդաշնակելու հա-
մար կեանքը բնութեան հետ , գեղարուեստը՝ որ
անոր հոգին պիտի բարձրացնէ զէպի ազնուագոյն
ոլորտներ : Եւ սակայն , գիտութեան օրըստօրէս-

կան զարգացման լուրջ, անսեթևեթ տիրապետութեան ներքև ի՞նչ պիտի ըլլայ արուեստը ազնիւ ու գողտրիկ: Կեղարուեստը բոլորովին պիտի փճանայ ու ամէն ինչ մեքենական, գրական հանգստամանք մը պիտի առնէ: Չեմ կարծեր:

Գիտութիւնը իր առաջդիմական քայլին հետ հին կարգերը, հին բարքերը բարեշրջելով, բնական է ծնունդ պիտի տայ, ամբողջապէս տարբեր հանգամանքներու մէջ, նոր մարդկութեան մը: Այս վերջինը, կազմութեան մը բոլորովին անհամապատասխան նախորդ սերունդին՝ աւելի գիտական խմորով մը շաղուուած է: հետևապէս պիտի ունենայ գեղեցկագիտութեան զգացումը աւելի պարզ, աւելի յստակ, աւելի վճիտ: Բնութեան գեղեցկութիւնը զինքը հրապուրած ատեն, չպիտի գոհացնէ թոյլ ու փափուկ արտայայտիչ մը գտնալով անոր մէջ իբր արուեստագէտ, այլ խրթան մը պիտի ըլլայ մանաւանդ, բոլոր գեղեցկութեանց մայր՝ բնութիւնը, աւելի մանրակրկիտ, աւելի մօտէն ուսումնասիրելու:

Արուեստը ծնունդն է օժտուած մարդերու ինքնաբերական արտադրութեանց. ո՛ր և է ուսումնասիրութիւն չի կայ հոն: Անկպնտն աշխատութիւն մըն է, խանդավառ վայրկեանով մը տաքցած: Կը նստի արուեստագէտը ու իր արտադրութիւնը ահա՛, առանց ճիգի, գեղեցիկ: Անոնց այժմու կազմութեան արտացոլացումն է աս: Ոչինչ գիտական խմոր՝ որովհետև միջավայրը չունի տակաւին խորունկ զգացում մը, գեղարուեստը ամենամեծ բաժին մը կիւրացնէ հոն: Վաղը, կազմութիւնները, ինչպէս ըսի, կը փոխուին: Արուեստագէտ գործարանաւորութիւն մը որ թոյլ է այսօր և ներշնչուած վայրկեաններուն միայն կարտագրէ, թո՛յլ՝ բոլորտիքի մարդկութեան զոր կլիման երազուն կընէ, ազդեցութեան վազը սակայն պիտի ամրապնդուի, պիտի տաքնայ այն ընգհանուր կրակ գործունէութեանէն, որ բնութեան երևոյթներուն ուսումնասիրութեանը մէջ պիտի կայանայ, ա՛լ տարբեր կերպով զգալով արուեստը, տարբեր կերպով արտայայտելով զայն:

Ուրեմն, որովհետև գեղարուեստը անգաղար ձգտում մը պիտի ունենայ դէպի բնութիւն, հետևապէս կը նշանակէ թէ՛ արուեստը օրըստօրէ պիտի խրացնէ գիտութեան առանձնայատկութիւնները, սակայն միշտ որոշուելով իբր անջատ գեղեցկագիտական տարր մը: Որովհետև ամէն ինչ գիտութեան մէջ յստակ, որոշ ու պարզ է, հետևապէս, գեղարուեստն ո՛ր պիտի ըլլայ յստակ, որոշ ու պարզ: Չլային գրութեան անջատ, անկախ զարգացումը արտադրեց գեղարուեստ մը բոլորովին կնճռոտ, քմայական ու շուարած. վաղը, երբ ներդաշնակուի անիկայ միջավայրին հետ,

որ աւելի քաղաքակրթուած պիտի ըլլայ, անաջ կուգայ արուեստ մը, պարզ ու լուրջ, կեանքը պտտկերացնող: Այսպէս վաղուան գրականութիւնը պիտի ըլլայ բոլորովին ընկերային հարցերով զբաղող արուեստ մը, վաղուան բանաստեղծութիւնը է՛ն ժողովրդայինը, է՛ն անկեղծն ու է՛ն տաքը թերևս ըլլայ ու ամբողջ գեղարուեստը այսպէս:

Կեղրակացուի թէ գեղեցկագիտութեան ըզգացումը չի պիտի ոչնչանայ գիտութեան կարծր տիրապետութեան ներքև, այլ պիտի ձգտի անոր, պիտի ներդաշնակուի անոր հետ, ամբողջ մը պիտի կազմէ, սակայն ինչպէս ըսի, միշտ պահելով իր անջատ գոյութիւնը, իբր գեղեցկատական ուրոյն տարր:

ԱՆՈՏ ԱՆՈՏԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԵՐ



ՄՐԳԵՂԷՆՆԵՐՈՒ ԴԵՐԸ ՄԵՐ ՄՆԵԳԱՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Անգղիերէն բժշկական հանգեսի մը մէջ, բնախօս մը, մրգեղէններու մասին յօդուածի մը մէջ, կը շեշտէ սա՛ իրողութիւնը թէ՛ մրգեղէնները նկատողութեան չեն առնուիր յաճախ մեր սննդառութեան ուէ՛ժիմին մէջ: Շատեր, մրգեղէնները չեն համարիր, կըսէ յիշեալ գիտունը, իբր ո՛ր և է սնունդ, մինչդեռ, աւանդաբար, չեն դադրի գետնախնձոր, լուբիա և ուրիշ բանջարեղէններ ուտելէ: Մրգեղէնները՝ սովորաբար, ճաշէն յետոյ կամ ուրիշ ատեն կառնուին ոչ թէ իբրև սննդատու, այլ իբր լոկ զօրացուցիչ կամ մարսողական տարրեր: Մեծ սխալ մըն է, վասն զի մրգեղէնները, միևնոյն ատեն բնական և առողջապահական սնունդներ են: Աւելորդ է ըսել որ ասոնք պէտք է ուտուին այն ատեն միայն, երբ հասուն են ու չընասուած: Այս պարագային մէջ, երբ խառն ալ են միևնոյն ատեն տարբեր սննդարար նիւթերու հետ, կըրնան պատուականապէս իբր սննդատու բուսականներ ծառայել: Անոնց մէջ կը գտնուին զանազան թթուներ, որոնք լուծուելով օգտակար կըլլան մեր կազմութեան: Անոնցմէ ոմանք կը պարունակեն նաև շաքար՝ և ոմանք ալ բնասպիտակ (*albumine*) ու տեսակ մը ճարպային նիւթեր: Ելակները կը պարունակեն գլխաւորապէս երկաթ:

Հետևապէս, մրգեղէնները օգտակար սնունդներ են, և ըստ այնմ, անոնք պէտք է գործածուին ոչ միայն իբրև անկարեւոր, հաճոյառիթ բուսեղէններ, այլ իբր հարկաւոր տարրեր՝ մեր սննդառութեան ուէժիմին մէջ: Մրգեղէններէն շատերը իրենց սնուցիչ յատկութիւններէն զատ, ունին նաև արիւնը մաքրելու և զո-

վացնելու առաւելութիւնը : Ամեն անոնք , որոնք կը տա-
ռապին արեան շրջանի խանգարումներէ , կրնան իրենց
օրական ուտեստին վրայ աւելցնել մրգեղէններ ալ , ո-
րոնց օրտակարութիւնը , առողջապահական տեսակէտով
ապացուցուած է : կը յանձնարարենք ուրեմն մեր ըն-
թերցողներուն , ըմբռնելու պատուական խաղող , անու-
շիկ տանձ , հրապուրիչ խնձոր և ուրիշ մրգեղէններ :

Անոնք հում կամ եփուած , ամենքն ալ իրենց
օգտակարութիւնը ունին , միայն թէ ուտելու չափը և
ուտելու ատենը գիտնանք . արեւին մէջ երկար մնացած
տաք պտուղները , փտտած կամ տհաս , կը գրգռեն ,
կաւրեն , կը հիւանդացնեն ստամոքսը և յաճախ տեղի
կուտան ցաւալի հետեւանքներու : Բարի ախորժակի փափ-
կաձաշակներուն . . . :

ՄԷՆՏՈՐ



ՎԱՆՔԻ ՄԱՍԴՈՒՆ

Հեռու չէ այն ժամանակը երբ պատմութիւնը
կը տայ նրանց իր գօրաւոր աւանդին .

(Թիւ II ՀՆՁԱԿ , 1894)

Վանքի մարդ , մտիկ ըրէ : Բռնութեան կապանք-
ներէն ազատ մտածուած կը ծնի , ազատ կեանքը ան-
խուսափելի յաջորդը պիտի ըլլայ անոր : Թուրք կառա-
վարութիւնը կը սեղմէր հայ կեանքին պայմանները ,
ուստի , անպայման , ծնունդ առաւ յեղափոխական մը-
տածուած , յեղափոխական ոգին :

Հնչակեան Յեղ. կուսակցութեան գոյութիւնը՝ ար-
գիւնքն էր ուրեմն իրերու բնական բերվունքին եւ անոր
ծրագիրը՝ արտացոլացիկ հայելին էր օւկանական կեան-
քի , որ շրջաններէ պիտի անցնի յեղափոխութիւնը ու-
նենալով իրեն միջոց : Սերմերը կ'արգիւնաւորին ահա-
ւասիկ , ամբողջ երիտասարդութիւն մը կը վառուի հայ-
րենիքի փրկութեան մտածումով , ազատութեան գաղա-
փարին շուրջը հայ սիրտերը տաք տաք կը բարբախնեն :
Բայց դ՛ուք , դ՛ուք որ հայ ժողովուրդի անստոյգ դրու-
թեանը մէջ կը փնտռէք ձեր հացը , բնական է որ ինք-
նաձանաչութեան ոգիին դէմ վանականի մարտ մը պի-
տի փորձէիք , թոյլ , տխուր , ծիծաղելի : Գէպի վենե-
տիկ , խաւարամիտ հացկատակներ , դէպի վենետիկ . . .
վանքին մէջ գացէք ձեր զառանցանքներն ու ձեր ողբե-
րը երկնցնել , բարի Աստուածամարը մտիկ կընէ ձեզ . . .
Իսկ ժամանակը , որ կը բալէ անընդհատ , իսկ նոր գա-
ղափարները , որ կը վերընծիւղին անոր կուրծքէն , կա-
րելի չէ երբէք կասեցնել : Ա՛վ որ ժամանակի բային ,
ո՛վ որ առաջիմուծեան ոգիին չը հետեւիր , մարդ մը
չէ , անբան մը թերեւս . . . : Ահա թէ ինչո՞ւ կը պար-
ծենանք մեր մարդ ըլլալուն վրայ : Իսկ դուք , որ՝ իրե-

րու բնական շղթայաւորումով , արդէն մեռած էք , արդէն
գոյութիւն չունիք , ո՛վ պիտի փորձեր թերթ մը հրա-
տարակել « ձեր ետեւէն ինչպիսի դիտումով » :

Գուք ապականուած մարդերն էք բոլոր , որ շա-
հադիտական ձգտումներ ունին չը հետեւելու համար
ժամանակի շարժումին եւ որ ապիկար յաւակնութիւնը
կունենան զայն կարենալ կասեցնելու :

Ձէ՛ , ազգը խափել չըլլար , ի՞նչ է ձեր ուղղու-
թիւնը , ո՛ր է ձեր ծրագիրը , ի՞նչ կը հասկնաք դուք
ղուտ Աղգային կուսակցութիւն ըսելով : Բառերու հետ
խաղալով չէք կրնար աղատիլ , յաւիտենական աղտոտներ :

Մենք մեր թերթը չեզոքութեան քողին տակ չէ որ
կը հրատարակենք , մեր ուղեգիծը՝ մանանեխի հատի
չափ խելք ունեցողներուն արդէն կրնայ հասկնել թէ՛
մենք երիտասարդ ուժերս , անտարբեր չէինք կրնար մը-
նալ դէպի պառաւ , շահադիտական , անպատակ գոր-
ծակալութեան մը հանդէպ , որ արդէն իսկ ԾԱԻ Հըն-
չակի գուշակութեան համեմատ , ինկած է վերջնապէս
ու ա՛լ գոյութիւն չունի :

Մենք , որ հարազատ ուժերով , պատրաստ ենք
թոթուել շիթուածը , զոր ձեր ցաւաբար թերթը կը ծնի ,
եւ շինել հայ ժողովուրդը , պատրաստել անիկա հա-
մայնական զարգացումի շրջաններուն , ուրկէ բայլ մը ,
բայլ մը եւս , եւ ահա՛ տիեզերական ընթացքը ազգե-
րուն , որ փրկաւէտ յեղափոխութիւնը կաւետն ընկեր-
վարական Գաղափարին :

Վենետիկի մարդո՛ւկ , ընկերվարութիւնը ցնորք
մըն է , անանկ չէ՞ . . . : Ե՛հ , հայ ժողովուրդ , կարմիրք
վանական առաջնորդներ () ունենալնու . . . :

ԱՇՈՏ ԱՇՈՏԵԱՆ



ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

— « Հոգեկան կարողութեանց հայելին դէմքն
է » կ'ըսուէր . ըստ նորագոյն դիտողութեանց՝ « հա-
սակի աստիճանացոյցն ալ դէմքն է » կ'ըսուի : Քա-
ռասուն տարուան անձի մը դէմքերուն վրայ
խորշոմները՝ շատ մտածմանց եւ հոգերու նշան
են : Ճակատի վրայ ուռած խորշոմները սովորա-
բար մարմնաւոր : եւ հոգեկան ցաւերու յայտարար
են : Աչքի անկեան խորշերը նշան են թէ ՅՅրդ
տարին շատոնց անցած է . . . իսկ քթալատին
ու բերնի անկեան խորշոմները մեծ տարբեր կը
ցուցնեն : Աւելի մեծ հասակի նշան են ականջ-
ներու քովեր եւ ծնօտին վրայ ելած խորշոմները :
Բնական է այս ամենայն լաւ կը տեսնուի— բնա-
կան դէմքերու վրայ , եւ ոչ հազար ու մէկ շը-
պարներով ու— ծեփելով արուեստակեալ մումիա-
ներու վրայ . . . :

(Է. ԱՄՍՕՐԵԱՅ)

